

ԿԱՐԾԻՔ

Ֆաթեմի Սեյեղեհնասիմ Սայեղմոջքաբայի «Նոր բողոքականության տարածումը Հայաստանի եզրիների շրջանում և ինքնության տրանսֆորմացիաները» է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ատենախոսությունն ընթերցելիս առաջին հարցը, որ ծագեց, հետևյալն էր. այս բարդ թեման ուսումնասիրելիս հեղինակը ի՞նչ գիտական հիմքեր է ապահովել հետազոտության մեթոդաբանության համար, քանի որ, մեր կարծիքով, ընտրված հետազոտական օբյեկտն ունի կրկնակի «փակ խմբին» բնորոշ հատկանիշներ, որը դժվարացնում է նաև դրա ուսումնասիրումը: Մասնավորապես, հետազոտությունն իրականացնելու նպատակով հեղինակը ի՞նչ դժվարությունների է հանդիպել և ինչպես է կարողացել մուտք գործել եզրիների համայնք, իսկ այսուհետև՝ եհովականների և հիսունականների խմբեր: Կամ ատենախոսը, լինելով այլեթնիկ հանրույթի ներկայացուցիչ, հետազոտության ընթացքում կարողացե՞լ է արդյոք հաղթահարել մշակութային հեռավորության և եթիկայի խնդիրները՝ հարցազրույցների անանունության, տվյալների գաղտնիության պահպանումը, հարցվողին հոգեբանորեն չվնասելու, նրա մասնավոր կյանք չներխուժելու, հարկադրական համաձայնություն կորցելու և այլ հարցեր: Անշուշտ, այս և նմանատիպ հարցադրումներին ատենախոսի մոտեցումները հնարավորություն են ընձեռում ամրողական պատկերացում կազմելու նաև հետազոտության արդյունքների արժանահավատության և օբյեկտիվության մասին: Ատենախոսության նյութերի հետազա քննական վերլուծությունից կարող ենք նշել, որ, ի պատիվ իրեն, կարողացել է գտնել այս և նմանատիպ մի շաբք հարցերի գիտականորեն հիմնավորված պատասխաններ: Ատենախոսությունն ընթերցելիս պատկերացում ես կազմում հեղինակի՝ մշակութային մարդաբանության բնագավառում ունեցած գիտելիքների մասին, որը հնարավորություն է ընձեռել ամրողական պատկերացում

ունենալու ուսումնասիրվող օբյեկտի՝ եզդի եհովական և հիսունական համայնքների սոցիալ-մշակութային կյանքի վերաբերյալ։ Ֆաթեմի Սեյեդեհնասիմին հաջողվել է եզդի եհովականների և հիսունականների համայնքներում գտնել «դարպասապահներ»՝ մարդկանց, որոնք ապահովել են նրա «մուտքը» հետազոտվող այդ խմբեր, և նա կարողացել է հավաքել հարուստ դաշտային ազգագրական նյութեր։ Դրանք են եհովական և հիսունական դարձած շարքային եզդիները, քարոզիչները, երեցները, հոգևոր հովիվները։

Ատենախոսը 2017-2020 թթ. կատարել է հսկայածավալ դաշտային ազգագրական աշխատանք. 400-ից ավելի հարցազրույց Եհովայի վկաների կրոնն ընդունած՝ Հայաստանի և տարբեր երկրներից ժամանած եզդիների շրջանում և խմբային երեք հարցազրույց՝ ըստ սեռա-տարիքային հատկանիշների, որոնց մասնակցել է 20 մարդ։ Հիսունականների դեպքում հարցազրույցներին մասնակցել է 60 մարդ։ Ընդ որում, մասնակիցները ոչ միայն ներկայացնում են Հայաստանի, այլև Վրաստանի, Ռուսաստանի, Գերմանիայի եզդի եհովական և հիսունական կրոնական համայնքները։ Ատենախոսը կատարել է հետազոտության գործիքների ճիշտ ընտրություն. կիրառել է դիտարկման, խորացված, կենսագրական և խմբային հարցազրույցների մեթոդ։ Կարևոր և արդյունավետ ենք համարում նաև մասնակցային հետազոտության մեթոդի կիրառումը, որի շնորհիվ նա, անտեսելով բոլոր տեսակի ռիսկերը և վտանգները, մասնակցել է եզդի Եհովայի վկաների և հիսունականների ժողովներին (այդ թվում՝ համաշխարհային), հյուրընկալվել նրանց ընտանիքներում և «ներսից» կատարել դիտարկումներ և գրանցել նյութեր։ Բարձր գնահատելով ատենախոսի այդ աշխատանքները՝ այնուհանդերձ, ատենախոսության մեթոդաբանական հիմքերի վերաբերյալ ծագում են մի շաբթ հարցեր. 400-ից քանի՝ հարցազրույց է կատարվել դեմ առ դեմ, քանի՝ սը՝ տեսակապի և հեռախոսային հարցման միջոցով։ Հարցման մասնակիցներից քանի՝ սն են գյուղական և քանի՝ սը՝ քաղաքային բնակավայրերից։ Հարցման մասնակիցներից քանի՝ սն են բնակվում Հայաստանում և քանի՝ սը՝ արտերկրում (ըստ երկրների), նրանց բաշխվածությունը՝

ըստ սեռային և տարիքային կազմի և այլն: Հավանության արժանացնելով ատենախոսի կողմից հարցազրույցի մասնակիցների անանունության և անձնական տվյալների գաղտնիության պահպանումը՝ ներկայացվող որոշ պատմություններում հարցազրույցների մասնակիցների վերաբերյալ տվյալները բացակայում են կամ թերի են (օրինակ՝ էջ 53-ում, որտեղ նշված է միայն հարցազրույցի մասնակցի սեռը, 121-րդ էջում մի քանի մեջքերումներում բացակայում են մասնակցի տվյալները): Մեր կարծիքով, հավելվածում նպատակահարմար կլիներ նաև ներկայացնել դիտարկման, խորացված, կենսազրական, խմբային հարցաշարերը, որը հնարավորություն կտար պատկերացում կազմելու այն հարցերի մասին, որոնց վերաբերյալ հավաքվել է տեղեկատվությունը: Աշխատանքը կշահեր, եթե հեղինակը որոշակի տեղեկատվություն տար, թե մինչև Ռուսաստանում, Գերմանիայում նշված կրոնական փոքրամասնությունների բնակություն հաստատելը ո՞րն է եղել նրանց նախնական ծագման երկիրը, ո՞ր թվականին են հաստատվել, թե՝ նրանք տեղաբնիկներ են: Այդ հարցերի մեկնաբանությունը կարևոր է այդ կրոնական գաղափարախոսության տարածման սոցիալական ցանցի տեսանկյունից:

Անդրադառնանք ատենախոսության կառուցվածքին, որը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից, օգտագործված զրականության ցանկից ու հավելվածից: Ներածությունում հստակ ձևակերպված են հետազոտության հիմնահարցը, նպատակը, խնդիրները և ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսը մասնագիտական զրականության և փաստացի նյութերի հիման վրա համոզիչ կարողացել է հիմնավորել թեմայի արդիականությունը, ինչպես նաև վերլուծել մինչև այժմ Հայաստանում և արտերկրում եղղիների, եզդի եհովականների և հիսունականների վերաբերյալ հրատարակված գիտական աշխատանքները՝ ցուցաբերելով իր մոտեցումները: Ատենախոսը օգտվել է արևմտյան մի շարք ճանաչված հեղինակների հրատարակած աշխատություններից և դրանցում տեղ գտած նոր մոտեցումների շրջանակներում քննարկել և վերլուծել է իր իսկ հավաքած նյութերը:

Ներածությունում, էջ 12-24-ում տրված է Եղիշների, Եհովայի վկաների և հիսունականների վերաբերյալ պատմական ակնարկ, որը նպատակահարմար կլիներ տեղափոխել առաջին գլուխ և դարձնել առանձին Ենթագլուխ: Այդ նյութը կամբողջականացվեր, եթե ատենախոսը Եղիշների քանակի միտումների վերաբերյալ ներկայացներ նաև Հայաստանում իրականացված վերջին երկու մարդահամարի (2001 թ. և 2011 թ.) ցուցանիշները և նրանց տեղաբաշխվածությունը: Ատենախոսի այն պնդումը, որ Հայաստանում ապրող Եղիշները հիմնականում բնակություն են հաստատել լեռնային շրջաններում (էջ 14), այնքան էլ ճիշտ չէ, քանի որ գյուղաբնակ Եղիշների շուրջ 90%-ը ապրում է Արարատյան դաշտավայրում՝ Արարատի, Արմավիրի և Արագածոտնի մարզերում:

Ատենախոսության առաջին գլխում, որը բաղկացած է չորս Ենթագլխից, քննարկվում են Եղիշների կրոնափոխության պատճառները, Եղիշ Եհովայի վկաների և Եղիշի հիսունականների փոխընկալումներն ու փոխհարաբերությունները և ինքնության հարցը, նրանց կառավարման մարմինների գործունեությունը և այդ համայնքների ֆինանսական հարցերը: Նշենք, որ այդ գլխում հետաքրքրությամբ է ընթերցվում, և որից կարծիք ես կազմում ատենախոսի կատարած մեծ ծավալի աշխատանքի մասին: Այնուհանդերձ, այս գլխում ներկայացված վերլուծական նյութի վերաբերյալ ծագում են որոշակի հարցեր. օրինակ՝ ի՞նչ դեր է կատարում Եղիշների ընտանիքի կազմը նրանց կրոնափոխության հարցում (այն երկսերունդ, թե՝ եռասերունդ կամ ոչ լրիվ կազմ ունեցող ընտանիքներում է ավելի շատ տարածված), Եղիշու Եհովայի վկա և հիսունական դառնալը որքանո՞վ է ուժեղացնում կոնֆլիկտները այդ ընտանիքներում, եթե անդամների մի մասը կրոնափոխ չի եղել: Հեղինակը նշում է, որ, կրոնափոխ դառնալով, նրանք ազատվում են ավանդական պարտադրանքից և կարողանում են ազատ շփվել տարբեր ազգերի մարդկանց հետ (էջ 28), իսկ դառնալով Եհովայի վկա կամ հիսունական՝ արդյո՞ք մի վերահսկողության ձեր չի փոխարինվում մյուսով: Կամ կա՞ն ցուցանիշներ, որ այդ կրոններին հարելուց հետո նրանց մեջ շատացել է միջերնիկ ամուսնությունների

թիվը: Վիճակարույց է հեղինակը այն պնդումը, որ Եհովայի վկա եզդիները և հիսունականները հեռանում են իրենց նախկին բնակության վայրերից՝ գյուղերում և քաղաքներում ստեղծելով նոր հոգեսր համայնքներ(39): Ստացվում է, որ Հայաստանում կան գյուղեր, կամ ստեղծվել են նոր գյուղեր, որտեղ բնակվում են միայն եզդի Եհովայի վկաները, և դրանք դեկավարում են հոգեսր հովիվները: Այս մոտեցումը կարիք ունի լրացուցիչ մեկնաբանման, քանի որ պարզ չէ, թե խոսքը հոգեսր համայնքին է վերաբերում, թե՞ նոր բնակավայրերի ձևավորմանը:

Երկրորդ զլիսում վերլուծվում է Եհովականների և հիսունականների կրոնական զաղափարախոսության տարածման նպատակով քարոզիչների կիրառած մեթոդները եզդիական համայնքում: Չորս ենթազլիսում քննարկվում են քարոզի լեզվական խնդիրները, եզդի քարոզիչների դերը այդ հարցում, արտերկրի կրոնափոխ եզդիների ներգրավվածությունը նոր կրոնական համայնքներում, ընդ որում՝ տեղական և միջազգային համաժողովները դիտարկվում են որպես քարոզության գործիք: Այս զլիսում որոշակի լրացուցիչ մեկնաբանության կարիք ունի այն տեսակետը, որ Եհովական դարձած 15 տ. երեխաները նույնպես զբաղվում են քարոզով. «Եհովայի վկա դառնալուց և քարոզելու որոշակի հմտություններ ձեռք բերելուց հետո բոլոր հավատացյալները սկսում են քարոզել, այսինքն՝ կարելի է ասել, որ քարոզիչների տարիքը տատանվում է 15-18 տարեկանից մինչև 70 և ավելի տարիքի միջև» (Էջ52): Իսկ ատենախոսի ներկայացրած պատմություններից մեկում Եհովայի վկա քարոզիչը անշափահաս աղջիկ է, որը քարոզներ է իրականացրել ոչ միայն հարևանների շրջանում, այլև դպրոցում, որի համար ենթարկվել է պարսավանքի (Էջ 60): Որքանո՞վ են արժանահավատ այդ տվյալները, և որքանո՞վ են այլ հարցազրույցներում հաստատվել այդ տեսակետները, թե՞ ներկայացվածը եզակի դեպք է:

Երրորդ զլիսում հեղինակը քննարկում է եզդի Եհովայի վկաների և հիսունականների կրոնածիսական կյանքը: Եհովայի վկա և հիսունական դառնալուց հետո տեղի է ունենում եզդիզմից հեռացում. նրանք իրաժարվում են նախկին աղոթավայրերից և աղոթքներից, դպրարում են նախկին ծեսերից՝ ծնունդը,

մկրտությունը, հարսանիքը և թաղումը ավանդական ձևով կատարելուց.
«Կրոնափոխությունից հետո եզրիները սկսում են ապրել նոր կրոնի պահանջներով և օրենքներով։ Նրանք դադարեցնում են իրենց նախկին ծեսերի և տոների կատարումը։ Եթե նախկինում նրանք իրենց խնդիրների լուծման համար դիմում էին շեյխներին և փիրերին, ապա հիմա՝ կրոնափոխվելուց հետո, աղոթքով դիմում են Աստծուն, որպեսզի վերջինս օգնի իրենց խնդիրների լուծման գործում։ Նոր կրոններում եզրիներին հնարավորություն է ընձեռվում ավելի մոտ լինել Աստծուն։ Աղոթքը ձեռք է բերում նոր՝ կարևոր նշանակություն նրանց կյանքում։ Եթե նախկինում մրիղները զրկված էին հոգևոր գործունեություն ծավալելու իրավունքից, ապա նոր կրոններում բոլոր եզրիները հավասար են. նրանք տանն ամեն օր աղոթում են, իսկ խմբային աղոթքներ անում են ժողովների ընթացքում»(էջ 86)։ Այս գլխում բերված նյութերի վերաբերյալ դարձյալ ծագում են մի շարք հարցեր, որոնք կարիք ունեն լրացուցիչ մեկնաբանման։ Օրինակ՝ Եհովայի վկա կամ հիսունական եզրիները որտե՞ղ են հուղարկավորվում, ավանդական եզրիական համայնքների գերեզմանոցներում, և ի՞նչ խնդիրներ են առաջանում, արդյո՞ք ավանդական համայնքը մասնակցում է նրանց հուղարկավորությանը, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ այդ արարողությունը կատարում է ոչ թե շեյխը կամ փիրը, այլ երեցը, ընդ որում Եհովայի վկաները թաղման ժամանակ հրաժարվում են թե՝ հոգեհանգստի արարողությունից, թե՝ էզնահողից, յոթից ու քառասունքից, թե՝ թաղմանն ուղեկցող երաժշտությունից ու հոգեհացից։ Կամ ավանդական եզրիների ընտանիքում եզրի երեխան ծնվելուց անմիջապես հետո համարվում է եզրի և խնքնաբերաբար եզրիական ավանդական կրոնի կրող։ Այս առումով ատենախոսը նշում է, որ «Եզրի Եհովայի վկաների մոտ արարողակարգը լրիվ այլ է։ Երեխայի ծնվելուց հետո ծնողներն ազատված են որևէ ծեսի կատարումից, դրանք «սատանայի գործ» են համարում։ Ծնողները երեխային վաղ հասակից տանում են իրենց հետ «Թագավորության սրահ», և նա ներկա է լինում ժողովներին։ Եթե հասունանում և դառնում է գիտակից մարդ, կարողանում է խնքնուրույն որոշում կայացնել, այնժամ նա ընտրում է Եհովայի վկաների կամ

Հիսունականների կրոնը կամ կ նախապատվություն է տալիս եզդիական ավանդական կրոնին»(Էջ 87): Ինչպէ՞ս են կարողանում խուսափել երեխայի ծննդի հետ կապված ծեսերը չկատարել, եթե ընտանիքում կան ոչ եհովականներ և հիսունականներ: Այդ հարցում ընտանիքի և համայնքի բացասական դիրքորոշումն ի՞նչ դեր է կատարում ծպտյալ եհովականների և հիսունականների տարածմանը: Չնայած նշված այս հարցադրումներին՝ այնուհանդեռձ, ատենախոսության այս գլուխն ամենահաջողվածն է և գիտական նորույթի տեսակետից պարունակում է մի շարք նոր մոտեցումներ:

Չորրորդ գլուխը վերաբերում է Եհովայի վկա և հիսունական դարձած եզդիների առօրյա կյանքին՝ ուտեստի և հագուստի ոլորտում կրոնափոխության հետևանքով տեղի ունեցած փոփոխություններին, գենդերային, կրթության և առողջապահական խնդիրներին: Այս գլուխ առաջին ենթագլխում վերլուծվում են կրոնափոխ եզդիների փոխարարերություններն ավանդական եզդիական համայնքների հետ: Այս խնդիրն ամբողջական բացահայտելու համար նպատակահարմար կլիներ նաև ավանդական համայնքում կարծիքներ հավաքել կրոնափոխ եզդիների մասին, թե ինչ դիսկուրս գոյություն ունի նրանց վերաբերյալ: Կանանց մեջ Եհովայի վկա կամ հիսունական դառնալու մոտիվներին անդրադարձնալիս շատ կարևոր է հասկանալ, թե այդ խնդրում ինչ դեր է կատարում սոցիոմշակութային միջավայրը և, ելնելով դրանից, կա՞ արդյոք տարբերություն Հայաստանում և արտերկրում բնակվող եզդի կանանց վիճակի միջև: Բացի դրանից, 116-րդ էջում նշվում է. «Հիսուսի նման՝ մենք Աստծու Թագավորությունն ենք համարում ավելի լավ աշխարհում ապրելու միակ հույսը (Մատթեոս 6:9, 10):»: Սակայն այդ միտքը Մատթեոսի Ավետարանի այդ համարներին չի համապատասխանում: Նշված համարներն ունեն հետևյալ բովանդակությունը. «Հայր մեր, ոք երկնքում ես. սուրբ քող լինի քո անունը. Քո քագաւորութի՛ւնը քող գայ. Քո կա՛մքը քող լինի երկրի վրայ, ինչպէս ոք երկնքում ե» (Մատթեոս 6:9, 10):

Ատենախոսության գլուխների վերաբերյալ հարցադրումներից հետո նպատակահարմաք ենք համարում անդրադառնալ նաև ատենախոսության վերնագրում տեղ գտած «Նոր բողոքականություն» եզրույթին: Անշուշտ, կրոնական գրականության մեջ, սկսած XIX դարից, այդ եզրույթը լայնորեն կիրառվում է, բայց, օրինակ, կրոնական ինքնության տեսակետից եզրի եհովականները և հիսունականները որքանո՞վ են իրենց իդենտիֆիկացնում բողոքականության հետ, կամ որքանո՞վ են տեղյակ այդ եզրույթին, կամ որքանո՞վ է ընդունելի այն: Կարծում ենք՝ ներածության մեջ այդ հարցերը պետք է առանձին քննարկման առարկա դառնային: Այդ համատերսում հեղինակը նշում է, որ «Չնայած նրան, որ շատ զրքերում և աշխատություններում օգտագործվում է «աղանդ» բառեզրը Եհովայի վկաների և հիսունականների բնութագրման համար, հաշվի առնելով դրանում առկա որոշակի վիրավորական երանզը, աշխատության մեջ կօգտագործեմ կրոնական փոքրամասնություն ձևակերպումը»: Սակայն ամբողջ աշխատանքում շարունակում է օգտագործվել «Հիսունականների կրոն» և «Եհովայի վկաների կրոն» կապակցությունները (օրինակ՝ էջ 14, 18, 22-23, 26, 29-30, 34, 44, 77 և այլն):

Ատենախոսության «Եզրակացություններ» բաժնում հեղինակը նշում է, որ «Բացի մրիդներից (որոնք ամենից շատն են կրոնափոխ լինում)՝ երբեմն կրոնափոխ են լինում նաև շեյխները և փիրերը: Վերջիններս, սակայն, իրենց կրոնափոխությունը խիստ գաղտնի են պահում, որպեսզի չվտանգեն իրենց անձը»: Այս տեսակետի հիմնավորման վերաբերյալ ատենախոսության գլուխներում բացակայում է որևէ փաստարկ՝ մնալով եփառքեզային մակարդակում:

«Եզրակացություններ» բաժնում հեղինակը նշում է. «Կրոնափոխությունից հետո նկատելի փոփոխությունների է ենթարկվում եզրիների տոնածիսական կյանքը: Նրանք դադարում են նշել իրենց ավանդական սուսերը և ծեսերը: Հետևում են միայն Աստվածաշնչում հիշատակվող տոներին և ծեսերին, ապրում են՝ դեկավարվելով բացառապես Աստվածաշնչի պատվիրաններով: Կենսական ցիկլի ծեսերից

հատկապես թաղումն ու հարսանիքը սկսում են իրականացնել ըստ նոր կրոնի պահանջների: Ինչ վերաբերում է տարեպտույտի տոններին, ապա հավատափոխները հրաժարվում են ավանդական շատ տոնների կատարումից՝ նշելով միայն Քրիստոսի մահվան երեկոն» (Էջ 130-131): Եզդիական ավանդական համայնքի վերաբերյալ նմանատիպ եզրահանգումներ կատարելուց առաջ հեղինակի ուշադրությունն ուզում ենք հրավիրել այն հանգամանքի վրա, որ միգուցե ուշադրություն դարձներ նաև նրանց մոտ երկակի, եռակի ինքնության ձևավորման խնդրին (հիշենք թեկուզ նրանց կարգախոսը՝ եզդի ծնվում են և ոչ թե դառնում տեսակետը): Ատենախոսությունում դրա մասին կա փոքր ակնարկ, սակայն կարծում ենք, որ այն եզդիների մոտ համարվում է նոր ինքնության ձևավորման կարևոր գործոն:

Մեր այս նկատառումները որևէ կերպ չեն ստվերում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը, և դրանք հարցադրումներ են հեղինակի հետազ հետազոտական աշխատանքն ամբողջական դարձնելու համար: Ներկայացված ատենախոսությունն առանց վարանելու կարող ենք համարել ազգագրության բնագավառում կարևոր ներդրում, քանի որ եզդիների շրջանում կրոնափոխության հետևանքով նոր ինքնության ձևավորման և դրա գիտական ուսումնասիրության հիմնահարցն առաջին անգամ իր հստակ ձևակերպումն է ստացել այս ատենախոսության շրջանակում՝ դառնալով կարևոր գիտական նորույթ:

Ատենախոսի հրատարակած աշխատություններն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական բովանդակությունը և հիմնական ձեռքբերումները:

Ֆաթեմի Սեյեղենասիմ Սայեղմոջթաբայի ներկայացրած՝ «Նոր բողոքականության տարածումը Հայաստանի եզդիների շրջանում և ինքնության տրանսֆորմացիաները» Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունն ավարտուն գիտական աշխատանք է, ունի շատ կարևոր տեսական և գործնական նշանակություն, իսկ եզրահանգումները կարող են նպաստել Հայաստանում

կրոնական փոքրամասնությունների վերաբերյալ տեսական և զործնական նոր մոտեցումների ձևավորմանը:

Թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջները, ուստի միջնորդում ենք մասնագիտական խորհրդին շնորհել Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
առաջատար գիտաշխատող, Էթնոսոցիոլոգիայի բաժնի վարիչ,
պատմական գիտությունների դոկտոր
Միհրան Վարդգեսի Գալստյան

01.11.2021

Մ. Ք.

Ա. Գալստյանի պատուածություն
հասկանալու համար պահպանության
ինստիտուտի պատուածությունը
Մ. Գալստյան

